## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 382-Ա**

**« 19 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.**

**ՄԵՐԻ ՋԱՆՈՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՄՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N259-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Մերի Ջանոյանի դիմումը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

1. Մերի Աղաջանի Ջանոյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը: Աշխատանքը սկսել 2025 թվականի դեկտեմբերի 22-ից:
2. 2025 թվականի դեկտեմբերի 22-ից Լուսինե Սամսոնյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումից:
3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

**Վ. ԱՐՍԵՆՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**

**Հավելված**
**ՀՀ Վայոց ձորի մարզպետի**
**2025թ. դեկտեմբերի -ի**
**N -Ա որոշման**

# «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՄՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Հայկ Ավագյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական |
| Անդամներ՝ | |
| Գվիտոն Դավթյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում փորձագետ |
| Մայիս Նազարյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող |